

ԷԶԵՐ ԻՄ ՕՐԱԳՐԻՑ

Ներսես ավագ քահանա Պապայան

Հայկական Մեծ եղեռնի փաստագրական հուշագրությունների շարքը ավելացավ ևս մի ամկրկնելի հատորով: ԱՊՐԻԼ հրատարակչության մատենաշարով լույս ընծայվեց Ներսես ավագ քահանա Պապայանի «Էջեր իմ օրագրից» անգլերեն գիրքը (Լոս Անջելես. 2000 թ.): Այն հրատարակության է պատրաստել հեղինակի որդին՝ բազմավաստակ ուսուցիչ, գրող Երվանդ Պապայանը: Թարգմանությունը հմտությամբ իրականացրել է Արիս Գ. Գևորգը: Գրքի բնագիրը ամբողջությամբ հայերեն լեզվով հրատարակվել էր Երվանդ Պապայանի «Հիշատակներու արահետներով» (Լոս Անջելես. 1998 թ.) հուշերի շարքի առաջին մասում: «Էջեր իմ օրագրից» գրքի անգլերեն լույսընծայումը պարզ է. Հայ դատը ծանոթացնել օտար հանրությանը:

Գիրքը կազմված է բժիշկ Սարգիս Գարայանի կողմից գրված մախաբանից, Ներսես ավագ քահանա Պապայանի համառոտ կենսագրականից և չորս հատվածներով ներկայացված օրագրային մասից: Գրքում զետեղված են հեղինակի և նրա կյանքի հետ կապված 9 լուսանկարներ: Վերջում մահ տեղ է գտել հրատարակչի՝ տիար Երվանդ Պապայանի համառոտ կենսագրությունն ու գործունեությունը: Ընդամենը՝ շուրջ 80 էջ:

Ինչպես նշում է մախաբանի հեղինակը՝ «Այնթապի հայությունը և առհասարակ կիլիկիահայությունը 1915 թ. դեպքերում ծրագրված ձևով բռնազաղթվեց երեք ուղղություններով: Առաջինը՝ դեպի Դեր Զորի սիրիական անապատները, որից շատ քիչ մարդ վերապրեց. երկրորդը՝ դեպի Սիրիայի Համա, Հոմա և Սելիմիյե բնակավայրերը: Այստեղ, շնորհիվ տեղի արաբ բնակչության մարդասիրական վերաբերմունքի, բռնազաղթվողների գերակշռող մասը փրկվեց: Գաղթականության երրորդ ուղղությունն ընդգրկում էր Դրուզ լեռան ու Հորդանանի անապատային տարածքները: Այս ուղղությամբ էր օրագրի հեղինակի բռնազաղթի ճամպարի: Ինչպես վկայում են փաստերը, սովն ու տարածված համաճարակները խլեցին տարագրված հայերի մեծ մասի կյանքը: Եղեռնից վերապրած բախտավորներից էր Ներսես քահանա Պապայանը: Նրա սույն օրագրությունը կարևոր է հետևյալ երեք նկատառումներով. առաջին՝ այն նշված տարածքներից հասած ականատեսի միակ փաստացի վկայությունն է, երկրորդ՝ նրանում դեպքերը շարադրված են օր ըստ օրի, և երրորդ՝ գիրքը գրված է համայնքի առաջնորդի կողմից, որ իրազեկ էր բոլոր անցուղարձերին»:

Ներսես ավագ քահանա Պապայանը ծնվել է 1887 թ. կիլիկյան Այնթապում: Նախնական կրթությունը ստացել է Այնթապի Հայկազյան վարժարանում և երկրորդականը՝ Աղեմական դպրոցում: Մի քանի տարի տևող ուսուցչական գործունեությունից հետո ընդունվել է Տարսնի Սեմ Պոլ Կոլեջ: Ավարտելուց հետո հոգևորականի նվիրումով մեկնում է Երուսաղեմ: Նա Երուսաղեմից վերադառնում է 1910 թ. որպես Այնթապի մերձակա Զիբին գյուղի ավագ քահանա:

Ինչպես ընկալվում է օրագրության բնագիծը շարադրամքից, Ներսես քահանա Պապայանը տիրապետում է արձակին և ունի հակիրճ ու պատկերավոր գրելաոճ: Գիրքն ունի հուշագրական ժանրի հասուն կառուցվածք: 1915 թ. մայիսի 15-ից սկսվող և մինչև 1918 թ. մայիսը երկարող օրագրության հատվածը անվանվել է «Տարագրություն»: Դրանում նկարագրվում է բռնազաղթը իր բոլոր դաժանություններով, Այնթապից՝ Եփրատի ափերով դեպի Մարաշ, Հալեպ, Դամասկոս և Քերեք ու հետո՝ Երուսաղեմ: Երկրորդ գլխում նկարագրվում է Եգիպտոսի Պորտ Սահիլ քաղաքի հայկական վրանակայանը, որ ընդգրկում է խնդրո առարկա տարագրության 1918 թ. մայիսից մինչև 1919 թ. նոյեմբերի սկիզբը երկարող ժամանակահատվածը, երբ Տեր Ներսես Պապայանը մյուս այնթապցիների հետ վերադառնում է ծննդավայր՝ Այնթապ: Երրորդ գլխում այնթապահայության միասնական ու ազատատենչ հերոսամարտի պայքարն է: Այն հայոց պատմության հերոսական մի դրվագն է: Օրագրության սեղմ տողերի մեջ պատկերված է հայ կրոնավորության անձնուրաց նվիրումով կերպարը իր ժողովրդի նկատմամբ: Չորրորդ գլխում 1920-ականների Հալեպի նկարագրությունն ու գաղթական հայության պայքարի ու անկումության գաղափարի մարմնավորումն է ընդդեմ ճակատագրի հեզմամքին:

«Էջեր իմ օրագրից» գիրքը մի համանվագ է, որտեղ չափազանց դիպուկ ձևակերպումներով Ներսես քահանային հաջողվել է միահյուսել արձակն ու տեղեկագրականը: Սեղմ տողերում և խորաթափանցությամբ մեկնաբանվում է ժամանակի նենգ քաղաքականությունը: Այսօր այնքան ոգևորիչ ու պարտավորեցնող են հնչում հեղինակի հետևյալ տողերը՝ «Բայց և խառնակ մտածումները կտանջեն զիս հաճախ: Գրի կառնեմ զանոնք զավկիս համար, մաև անոնց համար, որոնք պիտի ընթերցեն զանոնք թերևս, օր մը, երբ ես բաժանված պիտի լլլամ այս աշխարհեն»:

ԴԱՎԻԹ ԲԵՐԹՄԵՆՋՅԱՆ